

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱՋՄԸ, ՁԵՎԱՎՈՐՄԱՆ
ԵՎ ՎԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Սույն կարգով կարգավորվում են Հայաստանի Հանրապետության տարածա-
կան տվյալների տեղեկատվական ենթակառուցվածքի (այսուհետ՝ ՏՏՏԵ) կազմի, ձևավոր-
ման, վարման հետ կապված հարաբերությունները:

II. ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՄԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2. Սույն կարգում օգտագործվել են հետևյալ հիմնական հասկացությունները՝

1) **տարածական օբյեկտ**՝ ցանկացած կոնկրետ օբյեկտ, որը կարող է որոշվել
առանձնահատուկ բովանդակությամբ ու սահմաններով և ներկայացվել որպես թվային
տվյալների բազա.

2) **բազային տարածական տվյալներ**՝ գաղտնիություն չպարունակող, բաց հրապա-
րակման համար նախատեսված, ժամանակի մեջ կայուն տարածական դիրքով առանձ-
նացվող և այլ տարածական օբյեկտների համար կողմնորոշման հիմք հանդիսացող,
առավել օգտագործվող տարածական օբյեկտների թվային տվյալներ.

3) **Հայաստանի Հանրապետության տարածքի ՏՏՏԵ-ի տարածաշրջանային
օպերատոր (այսուհետ՝ օպերատոր)**՝ Հայաստանի Հանրապետության կառավարությանն
առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի (այսուհետ՝ լիազոր մարմին)

աշխատակազմի «Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոն» ստորաբաժանումը, որը սույն կարգով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան իրականացնում է Հայաստանի Հանրապետության տարածքում մատակարարի կողմից իրեն տրամադրված տարածական տվյալների ինտեգրման գործառույթ.

4) տարածական տվյալների մատակարարներ (այսուհետ՝ մատակարարներ)

Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան՝ օպերատորին տարածական տվյալներ տրամադրող պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմիններ, ինչպես նաև իրավաբանական անձինք.

5) տարածական տվյալներ օգտագործողներ (սպառողներ)՝

ցանկացած իրավաբանական և ֆիզիկական անձինք, որոնք տարբեր նպատակներով օգտագործում են օպերատորի կողմից տրամադրված տարածական տվյալները, այդ թվում՝ համացանցում ստեղծված գեոպորտալի միջոցով.

6) գեոպորտալ՝ համացանցային միջոց՝ Հայաստանի Հանրապետության տարածա-

կան տվյալների բազա մուտք գործելու համար, որով ապահովվում են մետատվյալների որոնումը, ուսումնասիրումը, բեռնավորումը, ինչպես նաև տարածական տվյալների հրապարակումը թույլատրելիության շրջանակներում:

III. ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

3. ՏՏՏԵ-ն տեղեկատվական ռեսուրսների ամբողջականությունն է, որը նախատես-

ված է տարածական տվյալների հավաքագրման, մշակման, վերլուծության, արդիակա-նացման, պահպանման և սպառողին տվյալներ տրամադրելու համար: ՏՏՏԵ-ն բաղկացած է պետական տարածական տվյալների բանկից, ճյուղային, տարածքային և համայնքային տարածական տվյալների բանկից, մետատվյալների բանկից:

4. SSSԵ -ում ընդգրկված բոլոր բազային տարածական տվյալները պարտադիր են Հայաստանի Հանրապետության պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների համար՝ երկրատեղեկատվական համակարգերում օգտագործման նպատակով՝

1) պետական (բազային) տարածական տվյալներն այն տվյալներն են, որոնք սահմանված կարգով ստեղծվում և թարմացվում են լիազոր մարմնի կողմից.

2) ճյուղային տարածական տվյալներն այն տվյալներն են, որոնք ստեղծվում և վարվում են համապատասխան բնագավառի պետական կառավարման մարմինների կողմից.

3) տարածքային և համայնքային տարածական տվյալները ներառում են համայնքի կողմից վարվող տնտեսության աշխարհագրական տարրերը.

4) մետատվյալները տեղեկություններ են տվյալների մասին (աերոլուսանկարի ստեղծման տարեթիվը, կոորդինատային համակարգը, ընդգրկող տարածքը, չափսերը և այլն):

5. Բազային տարածական տվյալների օբյեկտների ցանկում ներառվում են Հայաստանի Հանրապետության տարածքի հետևյալ տարածական օբյեկտները՝

1) պետական գեոդեզիական ցանցի կետերը.

2) վարչատարածքային բաժանման միավորները, այդ թվում Հայաստանի Հանրապետության, նրա մարզերի, համայնքների և բնակավայրերի սահմանները.

3) կադաստրային միավորների օբյեկտները, որոնք հաշվառված են լիազորված մարմնի շտեմարանում.

4) կապիտալ շինարարության (շենքեր, շինություններ) օբյեկտները՝ հասցեավորման տեղեկատվությամբ, պետական, տարածաշրջանային (ռեգիոնալ) և համայնքային նշանակության գծային կառույցներով (ավտոճանապարհային և երկաթուղային ցանց, խողովակաշարեր, էլեկտրացանցեր և այլն).

5) անտառային հողերի տարածական միավորներն ու օբյեկտները.

6) ջրային ռեսուրսները.

7) ճանապարհային ցանցի օբյեկտները.

8) բնության հատուկ պահպանվող տարածքները՝ արգելոցները, արգելավայրերը, ազգային պարկերը, բնության հուշարձանները և դենդրոպարկերը.

9) պատմամշակութային անշարժ հուշարձանների՝ հատուկ պահպանվող և դրանց պահպանական գոտիների համակարգերի տարածքները.

10) քաղաքաշինական կարգավորման գծերը.

11) հասցեները.

12) ռելիեֆի թվային մոդելները.

13) աշխարհագրական օբյեկտների անվանումները.

14) լանդշաֆտային համալիրները:

6. Բազային տարածական տվյալների ցանկում կարող են լրացուցիչ ընդգրկվել սույն կարգի 17-րդ կետով ստեղծվող միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից առաջարկված այլ օբյեկտներ:

7. Բազային տարածական տվյալների նկարագրման պահանջների մշակման ժամանակ կիրառվում է տարածական օբյեկտների կոորդինատային տվյալների հետ օգտագործման սկզբունքը, որն առավելագույնս ապահովում է տարածական օբյեկտների կոորդինատային տվյալների ճշգրտությունը, նկարագրման լիարժեքությունը, հավաստիությունը և դրա իրավական նշանակությունը:

8. Մատակարարների կողմից տարածական տվյալներն օպերատորին փոխանցվում են էլեկտրոնային փոստի և (կամ) թվային կրիչի միջոցով:

9. Ստացված տարածական տվյալները քննարկվում են միջգերատեսչական աշխատանքային խմբի կողմից: Քննարկման ընթացակարգը սահմանում է լիազոր մարմինը:

10. Սպառողների (օգտագործողների) մուտքը բազային տարածական տվյալներ ապահովվում է օպերատորի կողմից՝ Հայաստանի Հանրապետության գեոպորտալի միջոցով, լիազոր մարմնի ղեկավարի հրամանով հաստատված հրահանգի հիման վրա:

11. Ճյուղային տարածական տվյալների կազմը և տարածական տվյալների նկարագրման պահանջները որոշվում են SSSԵ-ի տարածական օբյեկտների նկարագրման ընդհանուր պահանջներին համապատասխան:

12. Ճյուղային տարածական տվյալների կիրառումը պարտադիր է տվյալներ տրամադրած համապատասխան պետական կառավարման մարմինների կողմից օգտագործման համար:

13. Ճյուղային տարածական տվյալների ստեղծման ժամանակ պարտադիր պետք է օգտագործվեն բազային տարածական տվյալները:

IV. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ

14. SSSԵ-ի ստեղծման և զարգացման նպատակն ապահովելն է պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների, կազմակերպությունների ու քաղաքացիների ազատ մուտքը SSSԵ:

15. SSSԵ-ի հիմնական նպատակը մատակարարների և սպառողների լայն շրջանների կողմից տարածական տվյալների ստեղծման ու օգտագործման արդյունավետությունը մեծացնելն է:

V. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԽՆԴԻՐՆԵՐԸ

16. SSSԵ -ի խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում միասնական կոորդինատային հիմքի պահպանման ապահովումն ու օգտագործումը՝ Հայաստանի Հանրապետությունում մշտական գործող ռեֆերենց կայանների ցանցի ստեղծման և օգտագործման, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքի բազային տարածական տվյալների ստեղծման ու արդիականացման հաշվին.

2) Հայաստանի Հանրապետության պետական կառավարման մարմինների, տեղական ինքնակառավարման մարմինների կողմից նոր տարածական տվյալների ստեղծման համար կանոնակարգված կոորդինատային համակարգի և բազային տարածական տվյալների օգտագործման պարտադիր պայմանների ապահովումը.

3) ճյուղային տարածական տվյալների ստեղծումը, վարումը և արդիականացումը.

4) բազային տարածական տվյալների և սպառողների (օգտագործողների) բաց հրապարակման ենթակա տարածական տվյալների մուտքի ապահովումը՝ գեոպորտալի միջոցով.

5) տարածական տվյալների մատակարարների միասնական ստանդարտների և տարածական տվյալների ձևավորման կանոնների հիման վրա տարբեր տարածական տվյալների համատեղելիության և ինտեգրման ապահովումը.

6) Հայաստանի Հանրապետության տարածքում տարածական տվյալների որակի և ճշգրտության բարձրացումը:

VI. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ԿԱԶՄԱԿԵՐՊՉԱԿԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

17. ՏՏՏԵ-ի կազմակերպչական աշխատանքներն առավել արդյունավետ և համակարգված իրականացնելու նպատակով Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշմամբ ստեղծվում է միջգերատեսչական աշխատանքային խումբ, որի կազմը հաստատում է լիազոր մարմինը:

18. Լիազոր մարմինը ՏՏՏԵ-ի ստեղծման և զարգացման շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառնությունները՝

1) նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի մշակում.

2) ՏՏՏԵ-ի ստեղծման և զարգացման շրջանակներում պետական կառավարման մարմինների հետ համագործակցությանը մասնակցություն.

3) պետական կառավարման և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից բազային, ճյուղային, տարածքային ու համայնքային տարածական տվյալների և

մետատվյալների կազմի մշակմանը, ստեղծմանը, արդիականացմանը, տրամադրմանն ու օգտագործմանն աշակցության ցուցաբերում:

19. Օպերատորն իրականացնում է հետևյալ գործառույթները՝

1) տարածական տվյալների շարքը դասելու նպատակով տարածական տվյալների աղբյուրների գույքագրում.

2) տարածական տվյալների մատակարարի կողմից իրեն տրամադրվող տարածական տվյալների մշակում, ճշգրտում, հավաստիության պարզում, վերլուծություն.

3) արդիականության պահպանում և սպառողների համար գեոպորտալի հասանելիության ապահովում.

4) տեղեկատուների, դասակարգիչների և SSSԵ-ի գրանցամատյանների վարում, որոնք ապահովում են մասնակիցների, տարածական տվյալների, մետատվյալների և SSSԵ-ի ծառայությունների ճանաչումն ու կարգավիճակը:

VII. ՏԱՐԱԾԱԿԱՆ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔԻ ՏԵԽՆՈԼՈԳԻԱԿԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ

20. SSSԵ-ի տեխնոլոգիական ապահովման կազմի մեջ մտնում են՝

1) Հայաստանի Հանրապետությունում մշտական գործող ռեֆերենց կայանների ցանցը (Հայաստանի Հանրապետության պետական (ազգային) պլանային ցանցի բաղադրիչ մասը) բարձր ճշգրտությամբ արբանյակային դիրքորոշման համակարգը, որն ուղղված է պետական գեոդեզիական ցանցի տարածաշրջանային հատվածի օգտագործման արդյունավետության մեծացմանը.

2) Հայաստանի Հանրապետության պետական և տեղական ինքնակառավարման մարմինների միասնական երկրատեղեկատվական համակարգը, որն ապահովում է տարածական տվյալների ստեղծումը, արդիականացումը, պահպանումը, մատչելիությունը և որակի վերահսկումը.

3) տվյալների մշակման կենտրոնը, որն ապահովում է տարածական տվյալների, մետատվյալների և SSSԵ-ի տեղեկատվական տվյալների կանոնակարգված պահպանումն ու տրամադրումը.

4) Հայաստանի Հանրապետության գեոպորտալը:

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ-ՆԱԽԱՐԱՐ

Վ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ